



ՀԱՏԱԿԱԿՈՒՑ

22 Սյունիքի մարզի Միրսիան համայնքի Շաքի բնակավայրում գյուղատնտեսական նշանակության հողերից բնակավայրերի հողերի կատեգորիա փոխադրվող 1.4753 հեկտար տարածքի

Մ 1:5000



0.7846հա

Երջարայ ընկման/ ընկման/	Կոորդինատներ		Գծային չափեր
	X	Y	
1	8585256.7494	4379929.7525	2.25
2	8585257.4271	4379931.8973	5.52
3	8585260.0902	4379936.7279	65.00
4	8585298.8824	4379988.8831	2.07
5	8585300.1168	4379990.5427	32.97
6	8585311.8389	4379959.7322	64.04
7	8585361.3376	4379919.1006	47.98
8	8585399.2925	4379889.7516	22.59
9	8585392.6705	4379868.1519	21.71
10	8585413.5562	4379862.2402	14.05
11	8585417.3838	4379875.7624	3.50
12	8585420.1494	4379873.6239	17.93
13	8585437.9487	4379871.4648	1.31
14	8585439.2517	4379871.3188	6.24
15	8585445.4476	4379870.5645	23.55
16	8585458.9160	4379851.2460	6.00
17	8585452.9923	4379850.2798	0.34
18	8585452.6577	4379850.2252	11.26
19	8585441.5467	4379848.4130	34.14
20	8585407.5948	4379852.0224	43.61
21	8585367.5282	4379869.2322	126.23
22	8585256.7494	4379929.7525	

0.6907հա

Երջարայ արձայի	Կոորդինատներ		Գծային չափեր
	X	Y	
1	8585448.8406	4379870.1514	16.30
2	8585465.0181	4379868.1818	51.19
3	8585512.7678	4379886.6250	46.19
4	8585557.2474	4379899.0752	25.34
5	8585582.5698	4379899.9542	34.64
6	8585616.1603	4379891.4831	83.39
7	8585685.4564	4379860.1816	21.89
8	8585685.1112	4379839.9433	7.29
9	8585683.6820	4379832.7931	11.27
10	8585674.8077	4379839.7431	22.83
11	8585653.1876	4379847.0810	38.64
12	8585615.5924	4379856.0183	46.03
13	8585569.8550	4379861.1833	44.95
14	8585525.0923	4379865.2497	48.07
15	8585478.2621	4379854.4014	17.52
16	8585460.9690	4379851.5608	22.18
17	8585448.8406	4379870.1514	

Կատարող  
  
 Վ. Ենիգիբարյան  
 Իրավական ընկալական 095, Երևան 27.02.2012  
 «Վ.Կ. ԳԵՈ» ՍՊԸ

Ե Ր Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 42

ք. Երևան

05.06.2019թ.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 14.1-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ մշակույթի 03/14.2/5517-18, ՀՀ բնապահպանության 3/02.2/30489-18, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների 07ԱԿ/25.2/4670-18, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների 03/16.3/6555-18 և ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների 05/14.1/13426-18 նախարարությունների, Անշարժ գույքի կոմիտեի ԱՊ/5206-18 գրություններով ներկայացրած դրական կարծիքները և տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի նիստի 2019 թվականի մայիսի 24-ի նիստի N N ԿԱ/78-2019 արձանագրության 6-րդ կետը՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Սիսիան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 1.4753 հա այգի (կադաստրային ծածկագիր՝ 09-070-0165-0007) փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման հողեր գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ. Տերտերյան

քարտուղար՝



Բ. Մինասյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշման դրույթներով կազմված հողաշինարարական գործի նյութերով նախատեսվում է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Շաքի բնակավայրում գտնվող << Հակոբջանյանի և Գալստյանի ՀԷԿ>> ՄՊԸ-ին վարձակալության իրավունքով պատկանող 1.4753հա գյուղատնտեսական նպատակային նշանակության բազմամյա տնկարկներից փոխադրել բնակավայրերի հողեր կատեգորիա՝ << հասարակական կառուցապատման հողեր>> գործառնական նշանակությամբ:

Կազմված հողաշինարարական գործի նյութերով << Հակոբջանյանի և Գալստյանի ՀԷԿ>> ՄՊԸ-ի կողմից նախատեսվում է իրականացնել ներդրումային ծրագիր, ըստ որի նախատեսվում է ստեղծել խեցեգործության և գորգագործության ուսումնական և վերապատրաստման կենտրոն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծրագրի իրականացումը կնպաստի զբոսաշրջության զարգացմանը, կկառուցվի հանգստի գոտի և կստեղծվեն նոր աշխատատեղեր, ուստի անհրաժեշտ է Շաքի բնակավայրում գտնվող << Հակոբջանյանի և Գալստյանի ՀԷԿ>> ՄՊԸ-ին վարձակալության իրավունքով պատկանող 1.4753հա գյուղատնտեսական նպատակային նշանակության բազմամյա տնկարկներից փոխադրել բնակավայրերի հողեր կատեգորիա՝ << հասարակական կառուցապատման հողեր>> գործառնական նշանակությամբ:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
01.07.2019թ

ՏԵՂԵԿԱՆՔ

<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Սիսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի հաստատումից հետո, համայնքային բյուջեի ծախսային մասում փոփոխություն չի կատարվի:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
01.07.2019թ